# ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՔՆԱՐԻԿ ԴՐԻԳՈՐՅԱՆ

Հայ դասական կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանն իր ստեղծագործական ուղու հենց սկզբից սերտ կապերի մեջ է եղել ռուսական առաջադեմ մշակույթի և նրա լավագույն ներկայացուցիչների հետ։ Նա եղել է ռուս մեծ կոմպոզիտոր Ռիմսկի-Կորսակովի աշակերտը, որը Սպենդիարյանին բնութագրել է՝ «տաղանդ է, իսկական տաղանդ» խոսքերով։ Սպենդիարյանը մտերիմ հարաբերություններ է ունեցել նաև Մ. Գորկու, Ա. Գլազունովի, Ա. Լյադովի, Ա. Օսովսկու, Մ. Իպոլիտով-Իվանովի, Ա. Արենսկու, Ն. Կլենովսկու, Յու. Վեսելովսկու և ռուսական մշակույթի բազմաթիվ այլ ներկայացուցիչների հետ, արժանացել է նրանց բարձր գնահատանքին։ «Ա. Սպենդիարովը,—գրում է Ա. Գլազունովը— մոտ ու թանկագին էր որպես մեծատաղանդ, ինքնատիպ կոմպոզիտոր և որպես անբասիր, մեծ և բազմակողմանի տեխնիկա ունեցող երաժիշտ»[1]։

Ռուս երաժիշտները ջերմորեն են վերաբերվել Սպենդիարյանի ստեղծագործությանը։ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի հեղինակային առաջին կատարման կապակցությամբ (Պետերբուրգ, 1905 թ.) Սպենդիարյանը գրել է իր ինքնակենսագրությունում. «Այն ոչ միայն հասարակության կողմից ընդունվեց ամենայն համակրանքով, այլև արժանացավ երաժշտական խոշոր հեղինակությունների՝ Ռիմսկի-Կորսակովի, Գլազունովի, Լյադովի մեծ հավանությանը, որոնք այդ օրվանից ինձ ընդունեցին փրենց ընտանիքը»[2]։

Այդ համերգի ժամանակ է կոմպոզիտոր և խոշորագույն երաժշտագետ Բ. Ասաֆևը ծանոթանում Սպենդիարյանի հետ և նրանից ստանում «Ներբագեղ երաժշտի» տպավորություն, որ «հմայիչ էր իր համեստությամբ և իր չաղմկող տաղանդով»։

Հուզիչ է եղել Սպենդիարյանի և Ռիմսկի-Կորսակովի բարեկամությունը։ Պահպանված նամակները, հուշերն ու ընծայագրերը բացահայտում են նրանց հարաբերությունների անկեղծ բնույթը, և այն սերն ու հարգանքը, որ տածում էր երիտասարդ Սպենդիարյանն իր ուսուցչի նկատմամբ։

Հայտնի է, որ Սպենդիարյանը վաղ հասակից է հանդես բերել իր ստեղծագործական ունակությունները և արժանացել տարբեր երաժիշտների գովեստներին, սակայն միայն Ռիմսկի-Կորսակովի գնահատանքից հետո է, որ նա վստահել է իր ուժերին։ Այդ են ապացուցում նրա ինքնակենսագրության հետևյալ տողերը. «Մինչև իմ հանդիպելը Ռիմսկի-Կորսակովի հետ ես բոլորովին համոզված չէի, չնայած Կլենովսկու և որոշ այլ երաժիշտների գովեստ-

---

1 «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին», կազմեց՝ Ալ. Թադևոսյան, Երևան, 1960, էջ 10։

2 А. А. Спендиаров, Автобиография, «Советская музыка», 1938, № 4, стр. 46.

ներին, թե ես ունե՞մ արդյոք բավականաչափ տվյալներ, որպեսզի ինձ ամբողջովին նվիրեմ կոմպոզիտորական գործունեությանը և բոլորովին արհամարհեմ իմ համալսարանական իրավաբանական կրթությունը. միակ երաժիշտը, որին ես կարող էի վստահել այդ հարցի լուծումը, ինձ ներկայանում էր սրգեն այն ժամանակ իմ ամենասիրելի կոմպոզիտոր Ռիմսկի-Կորսակովը. Եվ ահա ես սկսեցի երաղել նրան իմ ստեղծագործությունները երբևէ ցույց տալու հնարավորության և նրանց մասին դրական կարծիք ստանալու դեպքում նրա աշակերտը դառնալու մասին։ Իմ երազանքները իրականացան. մեծ հուզմունքով 1896 թ. գարնանը ես ներկայացա Նիկոլայ Անդրեևիչին՝ իմ ստեղծագործությունների փաթեթով, որոնք աչքի անցկացնելով նա կոմպոզիցիայի պարապմունքներին լրջորեն նվիրվելու տվյալների առկայություն գտավ իմ մեջ և համաձայնություն հայտնեց դառնալ իմ ուսուցիչը։ Մեծ ուրախություն և անասելի բավարարություն զգացի ես և միայն այդ ժամանակից հավատացի իմ ուժերին»[3]։

Ռիմսկի-Կորսակովին Սպենդիարյանն աշակերտում է 1896—1900 թթ.. Ավարտելով ուսումնառությունը, հայ կոմպոզիտորը իր անդրանիկ ծավալուն ստեղծագործությունը՝ «Կոնցերտային ուվերտյուրան» ձոնում է սիրելի ուսուցչին։

Ուսումն ավարտելուց հետո էլ, վերադառնալով իր ծննդավայրը (Ղրիմ), Սպենդիարյանը չի կտրում կապերը Ռիմսկի-Կորսակովի հետ։ Երբ ցարական կառավարությունը 1905 թ. դեպքերի կապակցությամբ հեղափոխական ուսանողների հայացքները պաշտպանելու համար Ռիմսկի-Կորսակովին վտարում է Պետերբուրգի կոնսերվատորիայից, Սպենդիարյանն իր բողոքի ձայնը միացնում է ռուս հասարակության առաջադեմ գործիչների ձայնին, պետերբուրգյան «Русь» թերթում զետեղելով հետևյալ բաց նամակը. «Թանկագին Նիկոլայ Անդրեևիչ. Ձեր մեջ բարձր գնահատելով աղնվագույն և ուղղամիտ մարդուն և ակնածորեն խոնարհվելով ռուսական արվեստում Ձեր ունեցած հսկայական նշանակության առջև, իմ անկեղծ համակրանքն եմ արտահայտում Ձեր արդար և ազնիվ բողոքին, որ Դուք հայտնել եք Սպբ. կոնսերվատորիայի դիրեկտորին Ձեր դրած նամակում։ Ես չեմ կարող իմ մեջ խեղդել խորին զայրույթիս զգացումը Ձեզ կոնսերվատորիայից վտարելու առթիվ. որը տեղի է ունեցել Ձեր բողոքի հետևանքով և հանդիսանում է ամոթալի փաստ վտարողների համար. անհավատալի և չտեսնված մի փաստ։

Ձեր աշակերտ Ա. Սպենդիարով

Տալթա, 29 մարտի, 1905 թ.»[4]։

Նամակից ակնհայտ է Սպենդիարյանի նվիրվածությունը Ռիմսկի-Կորսակովին և նրա վերաբերմունքը Պետերբուրգի քաղաքական սանցքերի հետևանքով երաժշտական կյանքում հանդես եկած իրադարձությունների նկատմամբ։

Սպենդիարյանը Ռիմսկի-Կորսակովին իրազեկ է պահել իր ստեղծագոր-

---

3 Նույն տեղում, էջ 45։

4 А. А. Спендиаров, Письма. Составление, вступительная статья и примечания К. Г. Григорян. Ереван, 1962, стр. 63.

ծական ծրագրերին և միշտ քաջալերվել նրա կողմից։ Այսպես, Սպենդիարյանին օպերա գրելու միտքը հրահրել է Ռիմսկի-Կորսակովը։ Հայաստանի գրականության և արվեստի թանգարանի Սպենդիարյանի ֆոնդում պահպանվել է Ռիմսկի-Կորսակովի «Ճպուռներ» տրիոն, որի անվանաթերթի վրա, 1903 թ. ապրիլի 23-ին հեղինակը դրել է. «Թանկագին Ալեքսանդր Աֆանասևիչին՝ անմիջապես օպերա ձեռնարկելու ցանկությամբ»[5]։

Սպենդիարյանը խորապես գիտակցել է օպերա գրելու ամբողջ բարդությունը և մեծ պատասխանատվությամբ է մոտեցել այդ հարցին։ Նա երկար ու լրտնաջան աշխատանք է կատարել իր ուժերը փորձելով վոկալ և սիմֆոնիկ ծավալուն ստեղծագործությունների կերտման մեջ։ Բացի «Ղրիմի էսքիզներ» սիմֆոնիկ սյուիտից ու «Զկնորսն ու փերին» բալլադից, 1900-ական թվականներին նա գրում է «Սպասում» արիոզոն, «Օզիմանդիա» երգը օրկեստրի նվագակցությամբ, «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը, աշխատում է գրական մի շարք երկերի վրա՝ ցանկանալով դրանք դարձնել օպերային սյուժե։ Օպերա ստեղծելու նկատմամբ ունեցած այս ամենալուրջ վերաբերմունքի մասին է ասում Սպենդիարյանի 1905 թ. 6-ը օգոստոսի թվակիր նամակը Ռիմսկի-Կորսակովին. «Մեծարգո Նիկոլայ Անդրեևիչ, մեր վերջին հանդիպումների ժամանակ ես բազմիցս ասել եմ Ձեզ, որ շատ կուզեի նախքան օպերա ձեռնարկելը, որևէ կապիտալ բան գրել նվագախմբի համար։ Իմ ցանկությունը իրականացավ. այս տարի մայիսին ես ավարտեցի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը, ըստ Լերմոնտովի բանաստեղծության... Նախքան իմ նոր ստեղծագործությունը հասարակական վճռին ներկայացնելը, ես կուզեի այն ցույց տալ Ձեզ և եթե այն Ձեր կողմից հավանություն կստանա, խնդրել Ձեր աջակցությունը, որպեսզի «Երեք արմավենին» ընդունվի եկող սեզոնի ռուսական սիմֆոնիկ համերգներից մեկում կատարվելու համար։ Վերադառնալով Պետերբուրգից անմիջապես կսկսեմ օպերա գրել։

Եվ այսպես, մեծարգո Նիկոլայ Անդրեևիչ, ներումն հայցելով անհանդիստացնելու համար, խնդրում եմ Ձեզ, հայտնել ինձ, Ձեր՝ Պետերբուրգ վերադառնալու ժամանակը»[6]։

Պատասխանը չուշացավ. «Թանկագին Ալեքսանդր Աֆանասևիչ, «Երեք արմավենին» հորինելու և ավարտելու առթիվ սրտանց ուրախ եմ. հավասարապես ուրախ եմ նաև «Օզիմանդիա» ռոմանսի համար։ Ես շատ եմ ուզում դրանց հետ ծանոթանալ։ ...Շատ հետաքրքրական կլինի լսել «Երեք արմավենին» և նայել պարտիտուրը։ Ուրախ կլինեմ Ձեզ հետ տեսնվելուս համար»[7]։

Ռիմսկի-Կորսակովի և Սպենդիարյանի բարեկամությունը շարունակվեց մինչև ռուս կոմպոզիտորի կյանքի վերջը։ Ահա Սպենդիարյանի նամակը հասցեագրված Ռիմսկի-Կորսակովի այրուն, 1908 թ. հունիսի 10-ին։

«Խորապես ցնցված ենք իմ թանկագին, ջերմորեն սիրված ուսուցիչ Նիկոլայ Անդրեևիչի մահվան լուրով։ Ես և իմ կինը ամբողջ սրտով ցավակցում ենք Ձեզ և Ձեր երեխաներին հասած մեծ վշտի առթիվ։

Սպենդիարով»[8]։

---

5 Գրականության և Արվեստի Թանգարան (ԳԱԹ), Սպենդիարյանի ֆոնդ, № 2556։

6 Ал. Спендиаров. Письма, стр. 65

7 Նույն տեղում, էջ 216—217։

8 Նույն տեղում, էջ 72։

Ն. Ռիմսկի-Կորսակովի մահվան առթիվ ապրած իր վիշտը, Սպենդիարյանը կիսում է նաև իր մտերիմ բարեկամ Գ. Մելիքենցովի հետ. «Ռիմսկի-Կորսակովի մահը ինձ վրա չափազանց ազդեց։ Որպիսի՜ սարսափելի դատարկություն կղզան այսուհետև ռուս երաժիշտները, նրա բոլոր երկրպագուները, ու հատկապես մենք, նրա աշակերտներս, որ նոր ենք սկսում մեր գործունեությունը։ Տանջագին դառնությամբ եմ մտածում, որ այլևս չկա թանկագին Նիկոլայ Անդրեևիչը, որին ես այնքան սովորել էի դիմել խորհուրդով և որի յուրաքանչյուր խրախուսական կարծիքը իմ ստեղծագործությունների մասին, ինձ միշտ մեծ ուրախություն էր պատճառում»[9]։

Ռիմսկի-Կորսակովի մոտ շատերն են սովորել, սակայն նա քչերին է համարել իր աշակերտը. ղրանցից էր Սպենդիարյանը։ Այդ մասին է ասում Ռիմսկի-Կորսակովի ընծայագիրը իր «Մարգարե» արիոզոյի անվանաթերթի վրա. «Թանկագին Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովին՝ իմ սակավաթիվ աշակերտներից մեկին»[10]։

Ռիմսկի-Կորսակովի՝ Սպենդիարյանի նկատմամբ ունեցած բարեկամական վերաբերմունքի մասին են վկայում ռուս խոշորագույն կոմպոզիտոր Գլազունովի հետևյալ խոսքերը. «Դու քո մեջ միացնում ես խոշոր տաղանդ ու անբասիր վարպետություն։ ...Քեզնով հիանում էին և՛ Ռիմսկի-Կորսակովը և՛ Լյադովը»[11]։

Սպենդիարյանը անձնական մտերմություն էր հաստատել նաև մի այլ ռուս խոշոր կոմպոզիտորի՝ Ալեքսանդր Գլազունովի հետ։ Նրանց բարեկամությունը, որ տևել էր 1906 թ. տևում է մինչև Սպենդիարյանի կյանքի վերջը՝ ամբողջ 22 տարի։ Գլազունովը, որ հաճախ էր Յալթա գալիս համերգների, իջևանում էր Սպենդիարյանի տանը։ Գլազունովի և Սպենդիարյանի բարեկամությունը արտահայտվել է նաև նրանց նամակներում, որոնց մեջ շոշափվում են թե՛ մեկի, թե՛ մյուսի կյանքին ու գործունեությանը վերաբերող բազմաթիվ հարցեր։ Սպենդիարյանի նամակներից պարզվում է, թե նա որպիսի նվիրվածություն է ցուցաբերել դեպի Գլազունովը և որքան բարձր է գնահատել նրան որպես կոմպոզիտորի։

Գլազունովի նամակները՝ ուղղված Սպենդիարյանին, բացի վերջինիս նկատմամբ ունեցած ամենաջերմ վերաբերմունքից ցույց են տալիս նաև, թե համերգային, երաժշտական-հասարակական ինչպիսի լարված կյանքով է ապրել խոշորագույն կոմպոզիտորը, և՛, թե նա որքան բարձր է դասել Սպենդիարյանին որպես ստեղծագործող։

Գլազունովի նամակներում, հուշերում կան Սպենդիարյանի ստեղծագործական և անձնական կերպարի շատ ճիշտ ու արժեքավոր բնութագրումներ։ Ահա ղրանցից մի քանիսը.

«Ալեքսանդր Սպենդիարովը իր մեջ երջանիկ կերպով միացնում էր իր մեծ ուսուցիչ Ռիմսկի-Կորսակովի ավանդները հայ ազգային երաժշտական հանճարի հետ։ Նա հայ և ռուս երաժշտական մշակույթի հոգևոր միասնության կենդանի մարմնացումն էր»[12]։

---

9 Նույն տեղում, էջ 73։

10 ԳԱԹ, Սպենդիարյանի ֆոնդ, № 2553։

11 Ал. Спендиаров, Письма, стр. 373.

12 ԳԱԹ, Սպենդիարյանի ֆոնդ, № 1702։

«Ես Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովին համարում եմ մեր ժամանակի ամենաականավոր կոմպոզիտորներից մեկը։ Ունենալով գեղարվեստական վառ ձիրք և լինելով առաջնակարգ երաժիշտ, Ա. Ա. Սպենդիարովը ժողովրդական երաժշտության՝ Արևելքի երաժշտության բնագավառում ստեղծագործելու հակումն է ի հայտ բերում։ Այս ասպարեզում նա անկրկնելի է իր երաժշտության արևային վառ գույներով և բուրումնավետ հնչողությամբ, Ա. Ա. Սպենդիարովի ստեղծագործությունները՝ «Երեք արմավենին» ու «Ղրիմի էսքիզները», նրա օպերան և ռոմանսները, ինչպես մեզ մոտ, այնպես էլ արևմուտքում, նրան մեծ փառքի են հասցրել»[13]։

Սպենդիարյանին նվիրված իր հուշերում, որ Գլազունովը գրել է 1929-ին և կրում է «Մեծատաղանդ, ինքնատիպ կոմպոզիտորը» խորագիրը, կարդում ենք. «Ալեքսանդր Աֆանասևիչի երաժշտության մեջ զգացվում է ներշնչման թարմություն, կոլորիտի բուրմունք, մտքի անկեղծություն և նրբագեղություն, մշակման կատարելություն... Որպես մարդ Ալեքսանդր Աֆանասևիչը համընդհանուր սեր է վայելում։ Նա մի հմայիչ մարդ էր, բյուրեղյա ազնվությամբ, համեստ ու ծայրաստիճան բարի։ ...Ես անկեղծորեն համոզված եմ, որ «Ալմաստ» օպերային, որն ինձ հայտնի է համերգում լսածս հատվածներից և հեղինակի վերարտադրությունից, սպասում է հսկայական հաջողություն. իսկ դա՝ է՛լ ավելի կամրապնդի ժողովրդական մեծ կոմպոզիտորի փառքը»[14]։

Դեպի Սպենդիարյանն ունեցած Գլազունովի բարձր վերաբերմունքի մասին են ասում նաև հետևյալ ընծայագրերը.

«Երեք արմավենու», հերոսական երգի և մի շարք հրաշալի երաժշտական այլ ստեղծագործությունների հեղինակ՝ Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովին։ Ամբողջ հոգով նվիրված, նրա ստեղծագործական բարձր շնորհքով հիացած Ալեքսանդր Գլազունով»[15]։

«Թանկագին բարեկամիս՝ Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովին ի նշան իմ հիացական խոնարհման նրա երաժշտական բարձր տաղանդի առջև»[16]։

Սպենդիարյանը բարեկամական ու ստեղծագործական կապերի մեջ է եղել նաև Ց. Կյուիի, Ա. Արենսկու, Ա. Լյադովի, Ն. Չերեպնինի հետ։ Այդ տեսակետից հետաքրքիր է Արենսկուն ուղղած Սպենդիարյանի 1904 թ. սեպտեմբերի 15-ի նամակը, որը լրացնում է մեր պատկերացումը Մաքսիմ Գորկու երաժշտական ճաշակի մասին և լույս սփռում նրա և Սպենդիարյանի հարաբերությունների վրա. «Հաջորդ շաբաթ, —գրում է Սպենդիարյանը,— ես մտադիր եմ իմ տանը երաժշտական երեկո կազմակերպել, որին պետք է հրավիրեմ նաև Մ. Գորկուն։ Նա շատ է ցավում, որ դու Ցալթայում չես. իր ասելով նա քո երաժշտության խոշոր երկրպագուն է»[17]։

Մտերիմներ են եղել նաև Սպենդիարյանն ու Լյադովը. վերջինս հատուկ նշել է Սպենդիարյանի՝ արևելքի երաժշտության հարազատ ընկալման ու վերարտադրման փաստը. «Նրա Արևելքը նոր էր, նոր. մինչև այդ չօգտագործված հայրենական ստեղծագործողների կողմից»[18]։

---

13 Ал. Спендиаров, Письма, стр, 374.

14 «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին», էջ 10։

15 ԳԱԹ, Սպենդիարյանի ֆոնդ, № 2544։

16 Նույն տեղում, № 2543։

17 Ал. Спендиаров, Письма, стр. 259.

18 «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին», էջ 10։

Ն. Չերեպնինը և Սպենդիարյանը ոչ միայն հաճախակի հանդիպել են, այլև Պավլովսկում 1904 թ. հունիսի 26-ին համերգ են կազմակերպել՝ նվիրված իրենց և վաղամեռիկ կոմպոզիտոր (նույնպես Ռիմսկի-Կորսակովի աշակերտ) Սմանիի ստեղծագործություններին։

Սպենդիարյանը ստեղծագործական ու բարեկամական կապերի մեջ է եղել նաև Կյուիի հետ, բարձր գնահատելով նրա երաժշտական գործունեությունը։ Այդ է ապացուցում Սպենդիարյանի հետևյալ հեռագիրը. «Սրտագին ողջունում եմ Ձեր կեսդարյա պանծալի արդյունավետ երաժշտական գործունեությունը. ի սրտե ցանկանում եմ, որպեսզի Ձեր եռանդը դեռ երկար տարիներ բաջալերող օրինակ ծառայի մեզ համար»[19]։

Որպես գործիքավորման վարպետ, երաժշտական գունեղ պատկերներ ստեղծող, Սպենդիարյանը հայտնի էր իր արվեստակիցների շրջանում, այդ պատճառով էլ Կյուին դիմում է նրան խնդրելով՝ գործիքավորել իր «Օրիենտալ» պիեսը և ուղարկում է «Արևելյան լեգենդ» վերնագրով մի բանաստեղծություն, խորհուրդ տալով նրա հիման վրա որևէ երգ գրել։

Մ. Գորկու և Ա. Սպենդիարյանի հանդիպումներից պետք է նշել կոմպոզիտորի տանը կայացած համերգը՝ ի պատիվ Մ. Գորկու։ 1904 թ. հոկտեմբերի 3-ին կայացած այդ համերգում այլ ստեղծագործությունների թվում կատարվել է Գորկու խոսքերով գրված «Ձկնորսն ու փերին» բալլադը։ Նույն բալլադի առաջին կատարման կապակցությամբ Սպենդիարյանը գրում է. «Մեծարգո Ալեքսեյ Մաքսիմովիչ. ուղարկում եմ Ձեր բանաստեղծության խոսքերով գրած իմ բալլադի պարտիտուրան և դաշնամուրային փոխադրությունը։ Այս բալլադը կատարվեց Պետերբուրգում սույն թվի ապրիլի 20-ին նվագախմբի ընկերակցությամբ։ Այն երգեց երիտասարդ արտիստ Պորուբինովսկին, որը շատ համակրելի ձայն ունի։ Բալլադը նա երգեց բավական արտահայտիչ և հասարակության պահանջով այն կրկնեց։ ...Նորից սրտագին շնորհակալություն եմ հայտնում այն բանի համար, որ դուք ինձ առիթ տվեցիք գրելու իմ ստեղծագործություններից լավագույնը, որը այդ պատճառով էլ ես ինձ թույլ տվեցի ձոնել Ձեզ»[20]։

Ռուսական մշակույթի լավագույն ներկայացուցիչների հետ ունեցած կապերը նպաստում էին կյանքի երևույթների նկատմամբ Սպենդիարյանի առաջադեմ հայացքների զարգացմանը։ Մյուս կողմից, Սպենդիարյանի միջոցով ուս երաժիշտները, մոտիկից ծանոթանում էին հայ մշակույթին։ Հետաքրքիր է ակադեմիկոս Բորիս Ասաֆևի հիշողություններից հետևյալ տողերը. «Սպենդիարովն ինձ խոր մտերմություն ներշնչեց այն ժամանակ դեռ ինձ անծանոթ այդ երկրի, նրա լրջմիտ, աշխատասեր ժողովրդի նկատմամբ, որի հնագույն և վեհ պատմությունը երկարատև համբերության և կյանքի տոկունության պատմություն է... Սպենդիարովը ինձ պատմեց հայկական եկեղեցական հնագույն մեղեդիների, ժողովրդական սիրային և օրորոցային երգերի գեղեցկության, սիրո և գեղեցկությամբ հմայվելու պաշտամունքի մասին... Ես սկսեցի ծանոթանալ հայ ժողովրդական բանաստեղծությանն ու երգերին.

19 Ал. Спендиаров, Письма, стр. 84.
20 Նույն տեղում, էջ 56։



ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

կոմպոզիտոր Սպենդիարովը և Հայաստանի պոեզիայի մասին Բրյուսովի գիրքը այդ բանում մեծ ազդեցություն ունեցան»[21]։

Ռուս բանաստեղծների ստեղծագործություններով են ոգեշնչված Սպենդիարյանի շատ ստեղծագործություններ. «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը՝ ըստ Լերմոնտովի, որի մեջ իր արտահայտությունն է ստացել հեղինակների խոր մարդասիրությունը, Մ. Գորկու խոսքերով գրած «Զկնորսն ու փերին» բալլադը՝ ուղղված քաղքենության, «կույր որդերի» նման ապրող մարդկանց դեմ։ Ցարիզմի ժամանակաշրջանի ռուս գյուղացու ծանր վիճակի մի արտահայտություն է «Զհնձած արտը» խմբերգը՝ ըստ Նեկրասովի, ռուսական արվեստն է փառաբանում «Վ. Վ. Ստասովի հիշատակին» կանտատը։ Ռուս պոետների բանաստեղծություններով Սպենդիարյանը գրել է նաև բազմաթիվ լիրիկական ստեղծագործություններ՝ «Աղատ թռչնակ» վոկալ կվարտետը և «Թաթարական երգը»՝ ըստ Ա. Պուշկինի բանաստեղծությունների, «Մենք կհանդիպանք» մելոդեկլամացիան՝ ըստ Ա. Չեխովի և վերջապես մշակել է ռուսական հեղափոխական և ժողովրդական երգեր։

Ա. Սպենդիարյանն իր ստեղծագործություններում հասել է այն սկզբունքների հաստատմանը, որոնք առանձնահատուկ են ռուսական դասական երաժշտությանը. դա խոր բովանդակության և գեղարվեստական կատարելության զուգորդումն է կյանքի ճշմարտացի վերարտադրության հետ, որը ճշմարիտ ժողովրդականություն է։

## СПЕНДИАРОВ И РУССКАЯ КУЛЬТУРА

КНАРИК ГРИГОРЯН

**Резюме**

Классика армянской музыки Александра Спендиарова связывали тесные узы с передовой русской культурой и его лучшими представителями. Римский-Корсаков, учитель Спендиарова, охарактеризовал своего ученика словами: «Он талант, подлинный талант».

Армянский композитор был в близких отношениях с М. Горьким, А. Глазуновым, А. Лядовым, А. Оссовским, М. Ипполитовым-Ивановым, А. Аренским, Н. Кленовским, Ю. Веселовским... Все они с уважением и любовью отзывались о нем. «А Спендиаров,— пишет А. Глазунов,— был близок и дорог мне как высокоталантливый самобытный композитор и как музыкант с безупречной, широко разносторонней техникой».

Русские музыканты тепло относились к творчеству Спендиарова. По поводу первого авторского исполнения симфонической картины «Три пальмы» (Петербург, 1905 г.) в автобиографии Спендиарова читаем следующее: «Сочинение это не только было весьма сочувственно принято публикой, но и удостоилось самого лестного одобрения боль-

[21] «Русские музыкальные деятели об армянской культуре». Рукопись института искусств АН Арм. ССР.

щих музыкальных авторитетов—Р.-Корсакова, Глазунова, Лядова и др.; принявших меня с этого времени в свою семью».

Трогательной была дружба Спендиарова и Римского-Корсакова, о чем свидетельствуют их письма, воспоминания и дарственные надписи. Известно, что многие учились у Римского-Корсакова, но он мало кого считал своим учеником. Одна из дарственных надписей Р.-Корсакова: «Дорогому Александру Афанасьевичу Спендиарову—одному из немногих моих учеников. Преданный Н. Римский-Корсаков.

23 апреля 1903 г.».

О высокой оценке дарования Спендиарова свидетельствует и переписка А. Глазунова. В ней и воспоминаниях русского композитора содержится проникновенные характеристики творческого облика Спендиарова. Приведем одну из них: «Александр Спендиаров счастливо сочетал в себе заветы своего великого учителя Римского-Корсакова с армянским национальным музыкальным гением. Он был живым воплощением армянской и русской духовной культуры».

Из встреч М. Горького и А. Спендиарова отметим одну: концерт данный в честь писателя. В этом концерте в числе других произведений была исполнена вокальная баллада «Рыбак и фея», написанная Спендиаровым на слова Горького.

Спендиаровым написаны много произведений на слова и других русских писателей: симфоническая картина «Три пальмы» (по Лермонтову), хор «Несжатая полоса» (по Некрасову), вокальный квартет «Птичка божия» и «Татарская песня» (по Пушкину), мелодекламация «Мы отдохнем» (по Чехову)... и, наконец, Спендиаров обработал множество русских революционных и народных песен.

Александр Афанасьевич Спендиаров в своем творчестве придерживался принципов, которые особенно характерны для русского классического искусства: сочетания глубокого содержания и художественного совершенства с правдивым отображением жизни. Это подлинная народность.